

ՅԱԲԵԼՈՒԱԾ ԵՒ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Թուականք որք՝ ի սկիզբն ուղղագրութեանցս, նշանակեն զէջս գրոցս՝ յորս յաւելլիքն կամ ուղղելիք. իսկ Բ տառ՝ զերկրորդ սիւնակ իջիցն. ուր ուրեք չիք այս տառ՝ իմացեալ լինի առաջին սիւնակն, կամ երկոքին եւս:

12. Բ. Ջահան գետ.

– Թէպէտ եւ իցեալ նշանակեցաւ բերան գետոյս՝ առ մուտս նաւաց, սակայն նաւք ոչ մեծք՝ կարեն յառաջ խաղալ եւ զարդիս՝ մինչեւ ցհարիւր բնամդոն, ըստ վկայութեան Անգղիացոյ ուրումն:

12. Բ. Ջահան գետոյ օժանդակ մի եւս արեւմտեան առաջից՝ երեւի ՚ի քարտի՝ անստոյգ ընթացիւք, խառնիլ ՚ի նոյն՝ ՚ի սահմանս Անագարբայ. զսա համարիմ կոչեցեալ երբեմն ՚ի մերագնեայց՝ Մախթայ գետ. զոր յիշէ ժամանակագիրն, եւ ասէ առ նովիմք իջեվանեալ եւ վրան հարեալ ամիրային Տարսոնի ՚ի գալն ՚ի վերայ Սոյ, յամի 1368, յառաջ քան զծանօթ արշաւանսն, յորում անօգնական մնացեալ՝ քաջօրէն սպանաւ Լիպարիտ:

30. Այծեմունք եւ Քօշք.

– Գորշագոյն այծեամն՝ ըստ Պարքըրի Եումուրճա կոչի. որ ասէ զմորթ նորին յղկեալ՝ կապերտս ծնրադրութեան աղօթից յարդարել մսլիմաց:– Ազգ բարձրապարիկ Քօշից, (զի մինչեւ յ'9000՝ երեւին), յումանց ՚ի գիտնոց համարի Capra Ibez:– Ջսիրահայեաց եւ երագոտն ազգն՝ ղազալ ըստ Արաբաց, թերեւս լաւ եւս է կոչել Այծեմնիկ քան Յամոյր:

42. Կողմնակալք Կիլիկիոյ.– Ի շարս բիւզանդական կողմնակալաց Կիլիկիոյ՝ արժան է յիշել եւ զհայազգին Մլենի Գեորգ, զորոյ կնիք կապարեայ՝ գտեալ յազգային թանգարանի Բարիզու, հմուտ դրամագէտն Շլումպերկեր՝ հրատարակեաց լուսաբանութեամբ: